

ԱՐԵՒՏԵԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ

Ուրբաթ, 4 Մայիսի, 2007

Ինչպես տեղեկացնում է «Ասպարեզ» օրաթերթը, Հայկական թատերական արուեստների ընկերակցությունը (Armenian Dramatic Arts Alliance) հաստատել է Վիլիամ Սարոյեանի անուան թատրերգութեան մրցանակ, որը կը տրուի հայկական նիւթով որեւէ թատրերգութեան՝ երկու տարին մէկ:

10,000 տոլարի արժողութեան սոյն մրցանակը, հաստատուել է «Վիլիամ Սարոյեան»ի անուան հիմնարկի կողմից:

Թատրերգութիւնների յանձնման ժամկետն է 2008 թուականի Փետրուարի 15-ը, իսկ առաջին մրցանակը կը յանձնուի նոյն տարուայ Օգոստոսին կայանալիք յատուկ միջոցառման ընթացքում:

Սրցոյթի մանրամասնութիւնները հրապարակուել են ընկերակցութեան կայքէջում՝ www.armeniandrama.org հասցեով:



Չորրորդ տարին լինելով, Գլենդէլի «Մաշտոց» քոլէջը կազմակերպել է Կիկիլիա, Կապադովկիա եւ Արեւմտահայաստան կատարուելիք ուխտագնացութիւն, որը տեղի կունենայ առաջիկայ Յուլիս 16-31-ը, քոլէջի նախագահ՝ դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի եւ պատմական յուշակոթողների մասնագէտ, լիբանանահայ Աւետիս Չափարեանի առաջնորդութեամբ:

Ուխտագնացութեանը մասնակցողները հնարաւորութիւն կունենան այցելելու պատմականօրէն հայապատկան եւ հայաբնակ այնպիսի քաղաքներ ու գիւղեր, ինչպիսիք են Մուսա լեռան գիւղերը, Բէյլան, Ադանա, Անարզաբա, Սիս, Հաճըն, Մարաշ, Չէթուն, Այնթապ, Քիլիս, Խարբերդ, Մուշ, Վան, Իգդիր, Բայազիդ քաղաքներն ու Արարատ լեռը:

Ուխտագնացութեան աւարտին, մասնակիցները երկու օրով կը լինեն նաեւ Պոլսում եւ Գընալը կղզում, ուր կը հանդիպեն հայկական համայնքներին եւ կը ծանօթանան հայկական կազմակերպութիւնների հետ:

Ուխտագնացութեան յաւելեալ մանրամասնութիւնների համար կարելի է դիմել «Մաշտոց» քոլէջին՝ (818) 548-9345 հեռախօսահամարով:



Ուրբաթ, Ապրիլի 27-ի երեկոյեան, Jewish World Watch կոչուող հրեական կազմակերպութեան եւ Հայ Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան թեմի գործակցութեամբ, Էնսինօ քաղաքի Valley Beth Shalom հրեական կենտրոնում տեղի է ունեցել նախաճաշ-հանդիպում եւ ապա՝ պաշտամունքի արարողութիւն, որին ներկայ են գտնուել բացմահարիւր անձինք:

«Մենք կը յիշենք, մենք կը յիշատակենք» կարգախօսը կրող սոյն միջոցառմանը ելոյթ են ունեցել հրեական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Լոս Անջելոսի քաղաքապետ Անթոնիօ Վիյարայգոսան, ովքեր անդրադարձել են Հայոց Ցեղասպանութեան պատմական ու քաղաքական ահաւոր իրողութեանն ու նշանակութեանը:

Միջոցառմանը ելոյթ է ունեցել նաեւ Լոս Անջելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը, որը քաղաքական ու միջազգային

տեսանկիւնից անդրադարձել է Հայոց Ցեղասպանութեանը եւ հրեական ողջակիզմանը:

Միջոցառման ակարտին, քառաձայն երգչախումբը կատարել է ամերիկեան, հայկական եւ հրեական օրհներգերը:



ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը կոչ է արել ամերիկահայութեանը, որ իր բողոքի ձայնը բարձրացնի «Լոս Անջելես Թայմզ» (Los Angeles Times) թերթի վարիչ-խմբագիր Դազլաս Ֆրանցի (Douglas Frantz) դէմ, որն ինչպէս հաղորդուել էր, անցեալ շաբաթ իր սահմաններից դուրս գալով, խափանել էր ամերիկահայ հանրայայտ լրագրող Մարք Արաքսի Հայոց Ցեղասպանութեան մասին վերլուծական յօդուածի հրապարակումը «Լոս Անջելես Թայմզ» օրաթերթում:

Ինչպէս շեշտել է Հայ Դատի Յանձնախումբը, Դազլաս Ֆրանցի արարքը որեւէ արդարացի հիմնաւորում չունի եւ մինչեւ այժմ նա որեւէ պատասխանատուութեան չի կանչուել իր խտրականական ու հակաօրինական քայլի համար:

«Մարք Արաքսի նկատմամբ Դազլաս Ֆրանցի գործած սխալը խտրականական հիմք ունի եւ զուրկ է լրագրական ու բարոյական չափանիշներից, ինչը ցոյց է տալիս, որ Ֆրանցը չի կարող զբաղեցնել «Լոս Անջելես Թայմզ»-ի նման յարգուած ու հեղինակաւոր թերթի վարիչ-խմբագրի պաշտօնը»,- նշել է Հայ Դատի Յանձնախումբը:

**Այս լուրերը տրամադրուած են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի
կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467**

Սոյն լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:

Լուրերը կարելի է վերատպել:

Լուրերի մանրամասնութիւնների համար կարդացէք «Ասպարտզ» օրաթերթը: